ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 119

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 14-ի N 34 որոշումը, կից հողամասի սեփականատիրոջ դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասը հնարավոր չէ օտարել որպես առանձին միավոր աճուրդային կարգով՝ *որոշում եմ.*

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.01382 հա (սեփականության վկայական N 13052021-07-0042, ծածկագիր 07-054-0315-0149) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման նպատակով օտարել կից հողամասի (սեփականության վկայական N 08072021-07-0114, ծածկագիր 07-054-0315-0206) սեփականատերեր Հակոբ Առաքելի և Էլմիրա Վազգենի Վիրաբյաններին 10000 (տաս հազար) ՀՀ դրամով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հուլիսի 30
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 120

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով ԱՁ Էլմիրա Վիրաբյանի կողմից ներկայացված հայտը՝ *որոշում եմ.*

1. ԱՁ Էլմիրա Վազգենի Վիրայանին տալ Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 25 հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021 թվականի 3-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հուլիսի 30
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 121

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով ԱՁ Հակոբ Վիրաբյանի կողմից ներկայացված հայտը՝ *որոշում եմ.*

1. ԱՁ Հակոբ Վիրաբյանին տալ Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 4 հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2021 թվականի 3-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հուլիսի 30
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 122

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով ԱՁ «ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» կողմից ներկայացված հայտը՝ *որոշում եմ.*

1. «ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» ԱՁ-ին տալ Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 թիվ 1 հասցեում գտնվող «Աղբյուր» հացատանը ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրատեսակների վաճառքի, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2021 թվականի 3-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հուլիսի 30
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 123

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Էմիլ Սլավիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգեզանգված 4-րդ թաղամաս թիվ 72 հասցեում գտնվող 07-054-0212-0047 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն)՝ մեկ հարկանի բնակելի տան և պարսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. հուլիսի 30
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 124

ՍՈՒՍԱՆ ԴԱՎԹՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սուսան Բարկենի Դավթյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել իրեն, Լյուբա, Հերմինե և Գևորգ Հովհաննեսի Դավթյաններին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 32 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0037-0016) ինքնակամ կառուցված բնակելի տունը, հավաքունը, անասնաշենքը և պարիսպը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Սուսան Բարկենի, Լյուբա, Հերմինե և Գևորգ Հովհաննեսի Դավթյաններին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 32 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1968-2018 թվականներին ինքնակամ կառուցվել է 184.32 քմ մակերեսով բնակելի տուն, 8.35 քմ մակերեսով հավաքուն, 33.36 քմ մակերեսով անասնաշենք, 64.23 քմ մակերեսով ավտոտնակ, 15.52 քմ մակերեսով խորդանոց և 5.8 քմ մակերեսով պարիսպ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սուսան Բարկենի, Լյուբա, Հերմինե և Գևորգ Հովհաննեսի Դավթյաններին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 32 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ *որոշում եմ.*

1. Քաղաքացիներ Սուսան Բարկենի, Լյուբա, Հերմինե և Գևորգ Հովհաննեսի Դավթյաններին պատկանող 1968-1992 թվականներին կառուցված 184.2 քմ մակերեսով բնակելի տունը, 8.35 քմ մակերեսով հավաքունը, 33.36 քմ մակերեսով անասնաշենքը և 5.8 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ վերը նշված շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. օգոստոսի 02
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 125

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գեգամ Գարի Ալեքսանդրի Մխիթարյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 15-րդ թաղամաս թիվ 27 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 2268922, ծածկագիր 07-054-0219-0027) 2010-2013 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Գեգամ Գարի Ալեքսանդրի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 15-րդ թաղամաս թիվ 27 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2010-2013 թվականներին ինքնակամ կառուցվել է 118.15 քմ ընդհանուր մակերեսով շինություններ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 15-րդ թաղամաս թիվ 27 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ *որոշում եմ.*

1. Քաղաքացի Գեգամ Գարի Ալեքսանդրի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող 2010-2013 թվականներին կառուցված 118.15 քմ ընդհանուր մակերեսով շինությունները համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացի Գեգամ Գարի Ալեքսանդրի Մխիթարյանին ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 158000 (մեկ հարյուր հիսուն ութ հազար) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարները 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. օգոստոսի 03
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 126

ԱԲԳԱՐ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջների՝ *որոշում եմ.*

1. Աբգար Յուրիկի Բուդաղյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Կոտայքի մարզ համայնք Պտղնի Պտղնի այգեգործական զանգված 14-րդ թաղամաս թիվ 19 հասցեի (սեփականության վկայական N 15072020-07-0140, ծածկագիր 07-054-0217-0025) և Կոտայքի մարզ համայնք Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 19/1 հասցեի (սեփականության վկայական N 28072021-07-0152, ծածկագիր 07-054-0217-0062) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերը միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝
Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 19:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. օգոստոսի 03
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 127

ՀՈՎՍԵՓ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Հովսեփ Կոյայի Խաչատրյանի դիմումը և որակավորված անձի կողմից գծված հողամասի բաժանման սխեման՝ *որոշում եմ.*

1. Հովսեփ Կոյայի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 15/1 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-054-027-0030, սեփականության վկայական N 14092020-07-0111) անշարժ գույքի բաժանումից առաջացած՝

1) S1 բաժանվող մաս - 0.05446 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասին և բնակելի տանը տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 15/1,

2) S2 բաժանվող մաս - 0.02767 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասին տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 15/3, համաձայն բաժանման սխեմայի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2021 թ. օգոստոսի 03
գ.Պտղնի